**Մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի «Արթիկի N 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրա (19 դասաժամ) և ինֆորմատիկա (4 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղի համար**

*Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:*

*Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝*
*- դիմում (ձև 1),*
*- 1 լուսանկար 3x4 չափի,*
*- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),*
*- անձը հաստատող փաստաթուղթ,*
*- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*
*- ինքնակենսագրություն (ձև 5),*
*- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*
*- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,*
*- հրապարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*
*- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

*Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:*

*Փաստաթղթերն ընդունվում են սույն թվականի հունվարի 13-ից մինչև հունվարի 24-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-15:00, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:*

*Մրցույթը տեղի կունենա* **2024 թ. հունվարի 27-ին՝ ժամը 14:00-ին**, *«Արթիկի N 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցե՝ ք. Արթիկ, Բաղրամյան 39: Տեղեկությունների համար զանգահարել 098 30 20 18 հեռախոսահամարով:*